# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներային քարտրիջի ծռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «30» մարտի 2020թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

Արթուր Եղիազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳՀՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ,

*հանձնաժողովի անդամներ՝*

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Գրիգոր Գաբրիելյան (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար

Հովհաննես Ստեփանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի պատասխանատու.

*հանձնաժողովի քարտուղար՝*

Օֆելյա Ասատրյան՝ Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտի բացման մասին.

Հայտը բացվել է www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով՝ 2020թ.-ի մարտի 30-ին, ժամը 11:00-ին:

2. Տեղեկություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ նաև Օրենք/ 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը (անունը) | Հասցեն |
|---|---|
| «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ | ք. Երևան, Աճառյան 33/4 |
| «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 18/2 |
| «Նորմա-պլյուս» ՍՊԸ | ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60 |
| «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ | ք. Երևան, Արաբկիր 19փ, 4-րդ շ, 5-րդ |

Ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

4. **Տեղեկատվություն Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տվյալներ՝ բացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

7. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, քանի որ www.armeps.am կայքի էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող Համակարգում արտացոլված է, որ ընթացակարգին մասնակցել է «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ն, սակայն ներբեռնված ֆայլերում, այդ թվում գնային առաջարկում, նշված են «Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ-ի տվյալները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

8. Տեղեկատվություն՝ մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերի վերաբերյալ.

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

9. Մասնակիցների առաջարկած գներն են.

*ՀՀ դրամ*

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Տոնական քարտերիչ | 6 083 300 | 1 216 660 | 7 299 960 |

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 1 | Տոներային քարտրիջ | 1 300 000 | 260 000 | 1 560 000 |

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «Նորմա-պլյուս» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Տոներային քարտրիջ | 832 500 | 266 500 | 999 000 |

10. Հաշվի առնելով, որ սույն գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ համաձայն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ անհրաժեշտություն է առաջանում՝ առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների՝ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի հետ վարելու միաժամանակյա բանակցություններ:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովը որոշեց.

-նիստը կասեցնել, և բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2020թ. ապրիլի 1-ին՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի վարչական շենքում (ք. Երևան, Կորյուն 15/1 հասցեում):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝

Էդգար Մելքոնյան

Էդգար Տոնականյան

Գրիգոր Գաբրիելյան

Հովհաննես Ստեփանյան

Քարտուղար՝ Օֆելյա Ասատրյան